Արձանագրություն N 2
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների համար նախատեսված պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/243» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08.08.2024թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Աղաբեկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Ռամազյան, Ա. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

Նիստի անցկացման վայրը՝
Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 310 սենյակ

1. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/243» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 06.08.2024թ. ստացված հարցադրումները և 08.08.2024թ. դրանց վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին

(Գ. Աղաբեկյան)

1.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ հարցադրումը և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացվել է հետևյալ պարզաբանումը.

Հարցադրում.

«Համաձայն պահանջվող տեխնիկական բնութագրի «Քաշը, կգ ոչ պակաս 45 Բեռնատարողությունը, կգ ոչ պակաս 450» և հաշվի առնելով Ձեր կառույցի կողմից ձեռքբերված տվյալ ծավալի «կոնտեյներներ թափոնների համար» նախկին մրցույթները ակնհայտ է, որ Երևանի քաղաքապետարանը ցանկանում է ունենալ Եվրոպական արտադրության կոնտեյներներ, որոնք այսօր աշխարհում առաջատարարն են որակով և դիմացկունությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը, ակնհայտ է դառնում, որ անհնար է մրցույթի արդյունքում նշված «45 օրացուցային օր» ժամանակահատվածում արտադրել և մատակարարել այդ ծավալով կոնտեյներներ: Խնդրում ենք վերանայել սահմանված ժամկետը, նախատեսելով խելամիտ ժամկետ:»

Պարզաբանում.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է պարզաբանում ներկայացրած հարցադրման վերաբերյալ.

«Ներկայացված տեխնիկական բնութագրով հստակ նկարագրված են այն չափանիշները և ժամկետները որոնց պետք է համապատասխանի մատակարարվող ապրանքը: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք առաջնորդվել տեխնիկական բնութագրով ներկայացված պահանջներով:»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Գ. Աղաբեկյան
Անդամներ՝ ..... Հ. Ռամազյան
..... Ա. Գևորգյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան